ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ Շիրակի մարզի «Հողմիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 2019 թվականի հոկտեմբերի 11-ի նիստի թիվ 1 արձանագրությունից.

Օրակարգում. 1. ՀՀ Շիրակի մարզի « Հողմիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Խորհրդի նախագահի ընտրություն:

2. ՀՀ Շիրակի մարզի « Հողմիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի հայտարարման մասին:

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը» հաստատելու մասին ՀՀ կառավարության 04.03.2010թ. թիվ 319-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դրույթները՝ ՀՀ Շիրակի մարզի « Հողմիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդ.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայտարարել մրցույթ ՀՀ Շիրակի մարզի « Հողմիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար:
2. Մրցույթն անցկացնել ՀՀ Շիրակի մարզի « Հողմիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում՝ 2019 թվականի դեկտեմբերի 9-ին, ժամը 14^{00}- ին :
3. Մրցույթի մասնակիցների գործերն ընդունել ՀՀ Շիրակի մարզի Հողմիկի միջնակարգ դպրոցում՝ մրցույթի մասին հայտարարության երկրորդ հրապարակման օրվանից 30 օրվա ընթացքում՝ 30.10.2019թ.– 28.11.2019թ. ժամանակահատվածում՝ ժամը 10^{00}-15^{00}, բացի ոչ աշխատանքային օրերից:
4. Մրցույթ հայտարարելու մասին կառավարման խորհրդի որոշումը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպետին:
5. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակելուց առնվազն երկու աշխատանքային օր առաջ տեղեկատվությունը տրամադրել կրթության ոլորտի պետական լիազորված մարմնին:
6. ԶԼՄ-ներում մրցույթ հայտարարելու մասին առաջին հայտարարությունը հրապարակել 25.10.2019թ. -ին, երկրորդը՝ 30.10.2019թ.-ին:
7. Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների /գործերի/ ընդունման պատասխանատվությունը դնել խորհրդի նախագահ Ա. Մինասյան վրա:

ՀՀ Շիրակի մարզի « Հողմիկի միջնակարգ դպրոց»

ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահ Ա. Մինասյան

14.10.2019թ.